«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Առարկան՝ *Մայրենի*

Հետազոտող ուսուցիչ՝ *Հարությունյան Ռուզաննա*

Ուսումնական հաստատություն՝ *Չարենցավանի Ս. Ավանյանի անվան № 4 հիմն. դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
Թեմայի արդիականություն----------5
Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում----------5
Եզրակացություն----------15
Գրականության ցանկ----------16

Ներածություն

Ընթերցանություն լավագույն ուսումն է: Մեծերի
մտքերին հետևելն ամենահետաքրքրական գիտությունն է:

Ալեքսանդր Պուշկին

Տարրական դպրոցում մայրենի դասի գլխավոր նպատակները երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և ընթերցողական կարողության ձևավորումը: Ինչպես նշված, այնպես էլ մայրենի լեզվի քերականությունից տարրական գիտելիքների և կարողությանների ձեռքբերումը դիտվում է որպես գրավոր և բանավոր, գրագետ խոսք կառուցելու, լեզվամտածողության և հայեցի հոգեկերտվածքի ձևավորման, ազգային և համազգային արժեքների ձեռքբերման կարևոր գործնական միջոց:

Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայում մշտապես դիտարկվել է բացատրական ընթերցանության մեթոդի հինգ բաղադրամաս:Բնագրի ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է բազմանշանակ, բազմաշերտ աշխատանք իրականացնել բնագրի բովանդակության շուրջ, որպեսզի ձևավորվի աշակերտի՝ոչ միայն կարդալու հմտությունը, այլև մշակվի ընթերցողական կարողություն: Բնագիրի շուրջ գրականագիտական տարրական, պարզ բովանդակությամբ աշխատանքը,մեր համոզմամբ, կնպաստի կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորմանը, որը կարևոր է գրագետ, ստեղծագործ, իր մասնագիտության մեջ խորանալու ձգտում ունեցող անձի ձևավորման համար:

Անցնենք այնպիսի կարևոր խնդրի արծածմանը,արձակմանը, վերաբերում է ընթերցանության հանդեպ դպրոցականների հետաքրքրության զարգացմանը:

«Մարդիկ դադարում են մտածել այն ժամանակ, երբ դադարում են ընթերցել »,- ասում փիլիսոփա Դ.Դիդրոն:

Ինչպե՞ս օգնել երեխային, որ նա դառնա ընթերցասեր: Երեխաները երրորդ դասարանում անհավասար վերաբերմունք են դրսևորում ընթերցանության հանդեպ: Որպես կանոն ,յուրաքանչյուր դասարանում գոյություն ունեն երեխաների երկու խմբեր, որոնք ընթերցանության նկատմամբ ցուցաբերում են բևեռացված վերաբերմունք:Առաջին խումբը կարդում է շատ և հաճույքով: Երկրորդը, ընդհակառակը, կարդալ չի սիրում, ընթերցում է ստիպողաբար:Այս վերջին խումբը հատկապես անհանգստություն է պատճառում ուսուցիչներին և ծնողներին: Կարդալ չսիրող երեխաները հաճախ վատ են տիրապետում ընթերցանության տեխնիկային:Հատկապես ընթերցողական հմտության բացակայությունը կարող է լուրջ խոչընդոտ դառնալ գրքի հետ երեխայի հաղորդակցման ընթացքում: Այս պարագայում հարկավոր է հատուկ ուշադրություն հատկացնել ընթերցման տեխնիկական կողմի

զարգացմանը:Այն,ինչպես և ցանկացած հմտություն,ամրապնդման և կատարելագործման նպատակով պահանջում է ջանքեր և ժամանակ: Նշենք, որ բուն ընթերցանությանը հատկացվող ժամանակը մշտապես բավարար չի լինում: Ընթերցողական հմտության զարգացման համար երեխան ամենօրյա , պարբերաբար կատարվող տնային վարժությունների կարիք է զգում: Ընթերցողական հմտության ձևավորումը սերտորեն առնչվում է երեխայի ընդհանուր խոսակցական կարողության զարգացմանը: Ակնհայտ դժվարությունների դեպքում հարկավոր է դիմել լոգոպետի օգնությանը: Մանկական ընթերցանության հիմնախնդիրների զբաղվող մասնագետները պնդում են, որ ընթերցողական հմտությունների մշակման գործում հատուկ դերակատարում ունի երեխայի հուզական վիճակը:

Բացի այն,որ նպատակադրվել ենք դաստիարակելու ընթերցանություն սիրող, սահուն և արտահայտիչ կարդացող աշակերտներ,հարկ է նաև պարզել,թե ի՞նչ ակադեմիական գիտելիքներ ձեռք կբերեն երեխաներն այս ընթերցանությունից,և ի՞նչ հմտություններ կձևավորեն:Առաջադրանքներն այս անգամ իրենց մեջ ներառում են գրավոր շարադրանքներ, բնութագրող բառեր,կերպարների վերլուծություն, նկարազարդումներ,գովազդ և անգամ փոքրիկ բեմականացում:

Ընթերցած բնագրի շուրջ իրականացվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի ճանաչողական հետաքրքրությունների,բազմաբնույթ պահանջմունքների բավարարման, ինչպես նաև հոգեկան գործընթացների զարգացման միջոց:

Կրթության որակի բարձրացումը, բովանդակության և ձևերի արդիականացումն էլ ավելի է կարևորում դպրոցականների կարդալու կարողության զարգացումը,կարդալու մշակույթի՝ ընթերցողական հմտությամբ ձևավորումը:Եվ այդ բնական է, որովհետև տեղեկատվության ոլորտից հմտորեն օգտվելու մշակույթը սերտորեն պայմանավորված է ընթերցողին հմտությամբ առկայությամբ, որը սովորողների ճանաչողական, խորքային հաղորդակցության ծավալման գործընթացների կարևոր բաղադրիչն է,կարելի է ասել՝ գլխավորը:

Գրագետ մարդու դաստիարակության հիմքերը դրվում են տարրական դպրոցում:

Կարդալը ֆունկցիոնալ գրագետ մարդու դաստիարակությանը կնպաստի, եթե բավարարվել ներքոհիշյալ երեք հիմնական պահանջները:

Ա. Ընթերցվելիք ուսումնական բնագրին կից տրվեն դիտորդական-զննական նյութեր(նկարներ,գծագրեր,քարտեզներ, լուսանկարներ և այլն),

Բ. ՈՒսումնական բնագիրն ունենա ճանաչողական արժեք.(ընթերցելով նյութը՝աշակերտն ձեռք բերի իր համար կարևոր, հետաքրքիր, անհրաժեշտ և մատչելի տեղեկատվություն),

Գ. Ընթերցելու գործընթացին ուղեկցի կամ հաջորդի հետազոտական-որոնողական,մեկնողական աշխատանք(ընթերցել ոչ միայն

վարժ,սահուն,արտահայտիչ կարդալ սովորելու,այլև որոշակի ուսումնակագիտական նպատակներով),

Դ. Կարդալու գործընթացը խարսխված կարդալու ցանկություն առաջացման,սովորողների զգացմունքային ոլորտի վրա. դրական դրդապատճառները,լավ կարդալ սովորելու կարևորության գիտակցումը աշակերտների ընթերցողական կարողությունների ձևավորման գործընթացին տալիս են նպատակաուղղված բնույթ՝դրդապատճառայնություն,որը ձևավորում է կարդալու պահանջմունք,կարիք:

Թեմայի արդիականությունը

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարաններում մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը:Դրա նպատակն է զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներ ու բառապաշարը: Հասկանալով ընթերցանությունն ակտիվանում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բաց լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝գեղագիտական ճաշակի,աշխատասիրության,ազնվության ,ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք լավագույն դաստիարակում:Այդ աշխատանքն իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում, այսինքն՝ ուսուցմանը զուգընթաց և արտադասարանային ընթերցանության միջոցով:

«Արտադասարանային»եզրույթը առաջին հերթին նշանակում է ոչ դասարանային,այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը:

Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորում մանկական տարիքում: Սա նշանակում է,որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել,իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրություններն

ու սերը,զարգացնել գեղեցիկի,գեղեցիկ, խոսքի խորության ընկալմամբ կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել տեքստը:Նրանք պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցած հեղինակի «նկարած»կյանք,ապրել այն որպես իրողություն,ապրումակցեն հերոսներին,այդ ամենը համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ և հասկանալ հեղինակի գաղափարները:Կրտսեր դպրոցականի համար,որպես ընթերցանության միջոց,գոյություն ունի միայն դասագիրքը:Սակայն գաղտնիք չէ, որ երեխայի համար Կարդալը մեծ մասամբ հաճելի զբաղմունք չէ:Այն աշխատատար գործընթաց է:

Ընդ որում,անհրաժեշտ է առանձնացնել ընթերցանության երկու տեսակ՝ընթերցանություն՝որպես տառերի վերակոդավորում,և ընթերցանություն՝որպես տեղեկատվության ընկալման հնարավորություն:

Այս երկու ուղղություններից անհնար և անիմաստ է մեկի իրականացումն առանց մյուսի:Իսկ դա դեռևս նոր կարդալ սովորող կրտսեր դպրոցականի համար այնքան էլ դյուրընթաց առաջադրանք չէ: Սկզբում նա հիշում է բառերը: Բնագիրը տեսնում ոչ թե տառերի կամ վանկերի,այլ բառերի տեսքով:Ապա աստիճանաբար խորանում է մայրենիի աշխարհում,ինչն էլ նպաստում է անցնել վարժ, սահուն ընթերցանությանը:Եվ բազմաթիվ վարժությունների վրա հիմնված աշխատանքը տալիս է իր պտուղները. Երեխան յուրացվում է դասագիրքը և սկսում հասկանալ կարդացածը:Որքան վաղ է երեխան սկսում կարդալ,այնքան ավելի շուտ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհը և նպաստում ընթերցողական կարողությունների կատարելագործմանը,բառապաշարի հարստացմանը և լեզվական ունակությունների զարգացմանը: Առանց դրա թերի կմնա անհատի ինքնակրթությունը:

Մայրենիի դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր ենք արթնացնում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ,նրանց հաղորդակից դարձնում հայոց լեզվի ճոխությանը,գեղեցկության ու ճկունությանը:Սովորողների մի մասի ընթերցանության նվազումը պետք է բացատրել նաև տեղեկատվական աղբյուրների առատությամբ:

Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն,սահուն,արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում:Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են,որ երեխան չի սիրում կարդալ: Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը,հեռուստացույցը,համակարգիչը,համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է: Ի՞նչ է նշանակում լավ կարդալ, ու՞մ են ասում՝ նա լավ է կարդում: Լավ Կարդալը կարդալու կարողության բարձր մակարդակն է: Այն ունի որոշակի բնութագրիչներ,որոնք ներկայացնում են կարդալու որակներ:

Կարդալու արագությունը կարդացողի բանավոր խոսքի տեմպին հատուկ արագությունն է, որի ժամանակ ընթերցվող նյութի բովանդակության ընկալումն առաջ է անցնում վերարտադրումից:Արագ կարդալու ուղղությամբ աշխատանք կարելի է իրականացնել միայն այն ժամանակ, երբ աշակերտն ազատ կարդում է ամբողջական բառերով և ունի լայն ընթերցողական տեսադաշտ:

Այսօր դպրոցում կարևոր է ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն ձևավորել, քանի որ ընթերցանությունը հիմք է հանդիսանում բոլոր գիտություններից գիտելիքներ ձեռք բերելու համար: Եթե երեխան չսիրի ընթերցել, ապա ինչպես նա կարող է գիտելիքներ ձեռք բերել:

Հետազոտման նպատակն է ձևավորել սեր և հետաքրքրություն դեպի ընթերցանությունը , զարգացնել ընթերցածը ճիշտ հասկանալու, վերարտադրելու

և վերլուծելու կարողություն:

Հետազոտման խնդիրները .

1.Ներկայացնել ընթերցանության կարևորությունը կրտսեր դպրոցականների համար:

2.Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորել հեքիաթի միջոցով:

3,Ներկայացնել ընթերցողական կարողությունների զարգացման տեխնոլոգիան հեքիաթի միջոցով:

Հետազոտման առարկան

Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում:

Աշխատանքի տեսական նշանակությունը

Աշխատանքի տեսական նշանակությունը ընթերցանության կարևորություն է իր բաղադրամասերով, տեխնոլոգիաների և այն ճիշտ ընտրելու և կազմակերպելու առաջարկում և հիմնավորումով:

Ինչպե՞ս ձևավորել ընթերցողական հետաքրքրություններ

Ամենակողմնորոշիչ մանկավարժությունը, որը պահանջում է աշակերտի նկատմամբ որպես սուբյեկտի մոտեցում, ենթադրում է, որ ընթերցանության գործընթացում պիտի հաշվի առնվի աշակերտի կարդալու հնարավորությունը,այսինքն, նա պիտի կարդա այնքան,որքան ինքը կամենում է և այն, ինչ ուզում է, ինչպես որ ուզում է, ում հետ է ուզում և երբ է ուզում:

Ընթերցանությունը մտքի համար նույն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝մարմնի:

Կարլեյլ

Ինչպե՞ս օգտագործել «Ինքնուրույն ընթերցանության նյութերը»

Ընթերցանության նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Մանկավարժական երկարամյա գործունեության բոլոր տարիներին ջանացել եմ դաստիարակել գրին ու գրականությանը նվիրված, ընթերցանության երեխաներ:Այս առումով կարևոր դերակատարում ունեն հատկապես ընթերցանության դասերը: Աշխատում եմ այնպիսի

գործիքներ կիրառել ,որ երեխաները վարժ կարդալ սովորեն,ընթերցանությունը հաճույք պատճառի նրանց,և միաժամանակփոխանցվել արժեքավոր տեղեկատվություն: Կարդալ և գրել սովորելով՝երեխաները մուտք են գործում մեծահասակների աշխարհ,ձեռք են բերում գրելու և կարդալու հմտություններ, դառնում ավելի ինքնուրույն և անկախ:Անցնելով դասարանից դասարան՝ փոխվում են երեխաների կարդալու դրդապատճառները:

Սկզբնապես նրանք ընթերցում են կարդալ- գրելու հմտությունների տիրապետելու, իսկ այնուհետև ինչ-որ բան սովորելու նպատակով: Աստիճանաբար նրանք սկսում են բավականություն ստանալ կարդալուց և գրելուց,դառնում են ավելի փորձառու:

Մեր կատարած ուսումնասիրությունների ժամանակ պարզեցինք,որ աշակերտները տվյալ տեքստի ծանոթանալու համար, այսինքն՝գոնե մեկ անգամ կարդալու և բովանդակությունը ու հիմնական միտքը պարզ մակարդակով ընկալելու համար ծախսում են առնվազն երեք րոպե:Իսկ իրականում այդ աշխատանքի համար հատկացված է մեկ. րոպե :Այսինքն՝տրված ժամանակահատվածում նրանք չեն կարողանում ծանոթանալ տեքոտին:

Մեկ դասաժամին կարող է դասերը հարցնել 4_5 հոգու:Հարց է առաջանում, իսկ ի՞նչ պետք է անեն մնացած աշակերտները այդ ընթացքում:

Արագ կարդալու շուրջ մեթոդիստների տեսակետները գրեթե նույնն է: Օրինակ՝Ջ. Գյուլամիրյանը նշում է, որ Արագ կարդալու հիմքում ընկած է վարժ կարդալու հմտությունը:Այսինքն աշակերտն առանց լավ կարդալու հմտությամբ տիրապետելու չի կարող Արագ կարդալ սովորել:

Ինչպես Ա.Բահատրյանն է նկատել՝<<Արագ ընթերցանությամբ անկարելի է ուսանել լավ կարդալ,այնինչ լավ կարդալով միշտ կարելի է ուսանել արագ ընթերցանություն>>:

Կարդալու կարողության զարգացման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է: Իսկ ի՞նչ է նշանակում լավ կարդալ, ու՞մ են ասում՝ նա լավ է կարդում:

Լավ կարդալը կարդալու կարողության բարձր մակարդակն է: Այն ունի որոշակի բնութագրիչներ, որոնք ներկայացնում են կարդալու որակները:

Լավ կարդալն ունի մի շարք որակական հատկանիշներ,որոնք սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: Հենց այդ հատկություններով էլ բնութագրվում է լավ կարդալը:Լավ կարդալու որակները են.

-ճիշտ կամ անսխալ կարդալ,

-հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,

-վարժ կամ սահուն կարդալ,

-արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,

-Արագ կարդալ:

Տարրական դպրոցում կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն ու ձևավորումը իրականացվում են նյութի բազմակի ընթերցանության ճանապարհով՝ կիրառելով բազմաբնույթ նպատակներ և կազմակերպման ինքնատիպ ձևեր ունեցող կարդալու տեսակներ:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզեցինք, որ կարդալու աշակերտները սխալներ թույլ էին տալիս հիմնականում

_բարբառը ազդեցությամբ

_բառիմաստը չըմբռնելու պատճառով

_հնչյունների փոխազդեցության պատճառով

_ շեշտի տեղափոխությունը հետ կապված

_հնչյունների ավելացման, պակասեցման պատճառով

Ամեն պահի ես երեխաներին բացատրում եմ գրագիտության նպատակն ու օգտակարությունը:Իմ դասարանը վերածվել է ձեռագիր և տպագիր բառերով հագեցած մի միջավայրի, որտեղ երեխաները ամեն րոպե առնչվում են գիր ու գրականությանը: Ես ամեն օր բարձրաձայն կարդում եմ երեխաների համար՝ընթերցանության նկատմամբ սեր առաջացնելու նպատակով: Ժամանակ եմ տրամադրում նրանց ինքնուրույն ընթերցրելու և գրելու,գրելու, միմյանց հետ՝ կիսելով կարդացածի և գրածի մասին իրենց տեսակետները: Համատեղ և ուղղորդված ընթերցանության դասերը, որևէ թեմայի շուրջ գրավոր խոսք կառուցելը և դա մյուսների ներկայացնելը երեխաներին մղում է համարձակ ձևով ինքնարտահայտվել,սիրել գիրքը,լինել ուշադիր ունկնդիր,հարցեր առաջադրել, շարադրել սեփական մտքերը և հասկանալ գրածի իմաստը:

Ես բարձր ակնկալիքներ ունեմ իմ աշակերտներից և հավատում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է հասնել հաջողության:

Ընթերցանության մեջ հաջողության հասնելու և խրախուսիչ գործիքներից մեկն էլ քննարկումներն են: Ժամանակ առ ժամանակ դասարանում կարելի կազմակերպել գրքերի քննարկումներ: Սովորողներն իրենց սիրելի գրքերի մասին նախապես պատրաստում են նյութեր,պատմում են, թե ինչեր սովորել գրքերից:Նման դեպքերում սովորաբար ծավալվում է ակտիվ քննարկում. սովորողները.լրացնում, ստուգում են միմյանց, հարցերի միջոցով գտնում ու բացում մութ անկյունները:Նման քննարկումները,որպես կանոն,անցնում են շատ ակտիվ մթնոլորտում: Դրանք արդյունավետ են,որովհետեւ սովորողները,տեղեկանալով այս կամ այն գրքի մասին,ցանկանում են կարդալ այն:

Ուսումնասիրելով ժամանակակից ընթերցավարների փորձը՝կիրառել եմ նաև խաղ-ընթերցանության հայտնի մեթոդներից մեկը:Սովորողների առջև է դրվում ընթերցարանի բոլոր գրքերը

նրանց ազատ ընտրելու հնարավորություն տալով: Երբ բոլորն ընտրել էին իրենց գրքերը, սահմանվեց ընթերցանության համար ժամանակ՝պայմանով, որ յուրաքանչյուր աշակերտ իր կարդացած գրքից պետք է առանձնացնել փոքրիկ հատված՝բարձրաձայն ընթերցելու համար: Տրված ժամանակը լրանալուց հետո սովորողները ընթերցեցին իրենց ընտրած հատվածները:Այնուհետև կազմեցին

խմբեր,որոնք պետք է լսած նյութերի հիման վրա հորինեին սեփական պատումները:

Ինչպես փորձը ցույց տվեց, աշխատանքն անչափ հետաքրքիր ու գրավիչ էր սովորողների համար, նրանք դասի սկզբից մինչև վերջ ոգևորված էին և հետաքրքրված. դասից հետո գրեթե բոլոր աշակերտներն իրենց համար առանձնացնել գրքեր՝տանն ընթերցելու համար:

Ընթերցանության նկատմամբ սեր արթնացնել գործում անչափ կարևորում ենք արտադասարանական միջոցառումները,որոնց կազմակերպման դրդապատճառները ևս պայմանավորված են ուսումնական նպատակներով: Նման աշխատանքները թև ու թռիչք

են տալիս երեխաների երևակայության հատկապես այն ժամանակ, երբ ուսուցիչն ընդունում է նաև իրենց առաջարկությունները: Իսկ աշակերտները երբեմն առաջարկում են այնպիսի լուծումներ, որոնք խոսում են ժամանակակից երեխայի վառ անհատականության,անմիջականության և համարձակություն մասին: Մատաղ սերնդի դաստիարակության , նրանց մեջ բարոյական արժեքների ձևավորման գործընթացում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին.ընտանեկան ընթերցանություն ընթերցողական կար

ողության ձևավորման հիմնական խնդիրներից մեկն է:

Կարդալու հմտությամբ ձևավորումը նույնպես այսօր հիմնախնդիր է: Առանց կարդալու հմտությամբ անձը չի կարող իրականացնել լիարժեք կրթության :Հասկանալի է, որ խոսքը ոչ թե ընդհանրապես կարդալ իմանալու մասին է, այլ կարդալ՝ պահպանելով նրա որակական հատկանիշները: Դրանք են՝

-կարդալ ճիշտ, այսինքն, այնպես ինչպես գրված է՝պահպանելով հայերենի գրական շեշտն ու ուղղագրական կանոնները.

-կարդալ հասկանալով, այսինքն, ըմբռնել կարդացածի հիմնական միտքը՝ գաղափարը, կռահել ենթատեքստը և որոշել դեպքերի պատճառահետևանքային կապերն ու դիտարկել կերպարների վարքն ու նկարագիրը.

_կարդալ սահուն, այսինքն,այնպես կխոսեիր,թույլ չտալ անհարկի դադարներ,կրկնությունն.

_կարդալ արտահայտիչ, այսինքն, ըմբռնել ներկայացված մտքերի,կերպարների հոգեբանական-զգացմունքային աշխարհի ներկայանալի բոլոր երանգներով և տարաբնույթ արտահայտչամիջոցներով այդ ամենը ներկայացնել ունկնդրին.

_կարդալ արագ. Նշանակում է կարդալ սեփական խոսքի տեմպով, անշուշտ, հաշվի առնելով բնագրի առանձնահատուկությունները.

Սովորողների կարդալու որակը պայմանավորված է առաջին չորս բնութագրիչների համատեղ դրսևորմամբ.դրանցից որևէ մեկի բացակայությունը կարդալու հմտությունը դարձնում է խոցելի: Բացառություն է արագ կարդալը .այն ձևավորվում է մնացած որակների ամբողջացման արդյունքում և մանավանդ տարրական դպրոցում պարտադիր պահանջ չի կարող լինել. կարդալու արագությունը գերխնդիր դարձնելը կխոչընդոտի կարդալու մնացած որակների ձևավորման ընթացքը:

_Հաճա՛խ հարցրեք երեխաների կարծիքը՝ընթերցվող գրքի վերաբերյալ:

Փոխվել է հասարակական կյանքն այնպես որ հեռուստասերիալների և համակարգիչների երևան գալով՝ գրքերը մղվել են երկրորդ պլան: Մեր օրերում մոր բարձրաձայն ընթերցանությունն ընտանիքում դարձել է հազվագյուտ դեպք:

Ընտանիքում սիրու՞մ են, արդյոք, կարդալ: Երեխան հաճա՞խ է ծնողներին տեսնում ընթերցելիս:Ծնողները ընթերցած գրքի վերաբերյալ իրենց տպավորությունները փոխանցու՞մ են երեխաներին:Հետևու՞մ են գրքերի աշխարհի նորություններին,նորությունների թվում՝ մանկական գրականության նորահայտ նմուշներին:Որպես կանոն, ընթերցել սիրում են ընթերցել սիրող ծնողների երեխաները:

Ընթերցանության նկատմամբ երեխայի անբավարար վերաբերմունքով մտահոգ ծնողների համար կարող են օգտակար լինել ամերիկյան հոգեբան Վ.Ուիլյամսի հետևյալ խորհուրդները.

_Ընթերցանությունից ինքներդ հաճույք ստացել և երեխաների մեջ ձևավորել նույնատիպ զգացում:

_Խրախուսե՛ք ընթերցող երեխայի հետ ձեր զավակին ընկերությունը:

_Քաջալերե՛ք երեխաների բարձրաձայն ընթերցանությունը,որպեսզի զարգանան նրանք հմտությունների ու ինքնավստահությունը:

_Թողե՛ք երեխաները քնելուց առաջ ընթերցեն որևէ ստեղծագործություն:

Պետք է պահպանել և զարգացնել համատեղ ընթերցանության պրակտիկան. Սա է այն խնդիրներից մեկը, որը դրված է ընթերցանության ուսուցման ժամանակակից մեթոդիկայի միջև:Կարող ենք նշել, որ այժմ այդ խնդիրները որոշակիորեն կարգավորում են: Գոհունակությամբ կարող ենք նշել, որ այժմ այդ խնդիրները որոշակիորեն կարգավորում են: Այդ է վկայում կրտսեր դպրոցում սովորողների համար ժամանակակից քրեստոմատիան՝<<Գիրք ընտանիքին.ընտանեկան ընթերցանության համար >>:

Կոչ եմ անում իմ գործընկերներին՝լինել առավել համբերատար, հանդուրժող, լավատես և հանդես չգալ միայն ժամանակակից երեխայի առանձնահատուկությունները քննադատող դերում: Գուցե մեր անսահման սիրով, հոգու ջերմությամբ,պատասխանատվության գիտակցումով,մարդասիրությամբ,հոգատարությամբ և էթիկայի փորձենք գտնել երեխայի հոգու գաղտնաբառերը տանող բանալին:

Կարևորում ենք նշել, որ ինչպես ընդունված է տարրական դպրոցում, մայրենիի դասերի ժամանակ իրականացվում է դասագրքերում զետեղված ստեղծագործությունների բազմակի ընթերցում:Այսպիսի ընթերցումը սովորաբար հոգնեցնում է երեխաներին, և աստիճանաբար մարում է նրանց կարդալու ցանկությունը:Երբ ստեղծագործության ընթերցումից առաջ աշակերտն ստանում է ուշագրավ, հետաքրքրություն առաջացնող ինքնատիպ,գործունեություն ծավալելու բնական պահանջ,հետաքրքիր և նպատակային հնարավորություն, որի արդյունքում աշակերտներն ամբողջությամբ հասկանում են հեղինակի նպատակադրումը:

Տարրական դպրոցի մայրենիի ծրագրում ընթերցանության բաժնի բովանդակությունն ու սովորողների կարդալու կարողության մակարդակին ներկայացվող պահանջները ենթադրում են, որ առաջին դասարան ընդունված

երեխաների մեկնարկային հնարավորությունները պիտի զգալիորեն բարձր լինեն,քան 20-25 տարի առաջվա դպրոցականներինը.որքան էլ որ գրաճանաչությանը տրամադրող ժամանակակից գրեթե կրկնապատկել է միևնույնն է՝ ժամանակակից առաջին դասարանցիներին ներկայացվող պահանջներն առավել բարդ են: Հնարավոր է, որ սա ևս կարդալու դժվարություն ունեցող երկրների թվի աճի մի պատճառ է:

Անշուշտ, կարդալու հմտության ձևավորման խնդրի լուծումն առաջին հերթին հանրակրթության պարտականությունն է: Ընդ որում, այդ ուղղությամբ աշխատանքների մեծ բաժինն ընկնում է տարրական դպրոցի վրա, բայց կարդալու կարողությունը հմտություն է դառնում Կրթության մնացած օղակներում իրականացվող աշխատանքի շնորհիվ: Այս աշխատանքի արդյունավետության բարձրացման և իրավիճակի վերահսկման նպատակով շահեկան են աշակերտների կարդալու կարողությունների զարգացման ընթացքի մշտադիտարկումները Կրթության բոլոր օղակներում:Բնականաբար, մշտադիտարկումների արդյունավետության համար պիտի մշակվել կարդալու հմտության ընդհանուր չափորոշչային պահանջներ՝ հաշվի առնելով հանրակրթության առանձին օղակների առանձնահատկությունները : Կարևորում ենք նշել,որ պահանջների մեջ տարրական դպրոցում էականը կարդացածի իմաստի ըմբռնումն է,գլխավոր մտքի բացահայտումը,ենթատեքստի կռահումը,բառապաշարի հարստացումը և կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցանությունը, ոչ թե մեկ րոպեում աշակերտի կարդացած բառերի քանակը:

Կարդալու արագությունը՝ բնութագրիչ ձևավորում է ինքնըստինքյան, երբ մնացած որակական հատկանիշներն անհրաժեշտ չափով զարգացած են:

Կարդալու կարողության զարգացման մակարդակի մշտադիտարկումը պիտի իրականացվի հանրակրթության բոլոր օղակներում յուրաքանչյուր տարի տարիքային բոլոր փուլերում, տվյալ դպրոցի բոլոր աշակերտների շրջանում՝ պահելով անվանական տվյալները և յուրաքանչյուր տարի համեմատելով ու որոշելով աշակերտների կարդալու կարողության մակարդակների փոփոխությունը՝ դինամիկան՝ վերլուծելու և համապատասխան ծրագրեր ու մեթոդիկաներ մշակելու, բացահայտելու համար այն դժվարությունները, որոնք չեն հաղթահարվել:

Սովորողների կարդալու ունակության ձևավորմանը միտված ժամանակակից դպրոցի ջանքերը հիմնականում կենտրոնացած են տարրական դպրոցի, այսինքն,

ուսումնական գործունեություն առաջին տարիների վրա: Հետագայում անընդհատ կարդալով՝այդ ունակությունը պիտի ամրակայվի,կատարելագործվի:Ցավոք, պրակտիկան ցույց է տալիս, որ ընդհակառակը. Դասարանն ի վեր կարդալու կարողության ներկայացնող ցուցիչները նվազում են, և շատ քչերի դեպքում է այն դառնում հմտություն:Սրա արդյունքում ձևավորվում է մի փակ շղթա. որովհետև երեխաները լավ չեն կարդում, դրա համար էլ չեն սիրում ընթերցել,կարելի է ասել՝ գրեթե չեն կարդում:

Կարևոր հանգամանք .

«Ամբողջական մանկավարժական գործընթացի իրականացման մեթոդը մանկավարժի և աշակերտների պրոֆեսիոնալ համագործակցությունն է, որն ունի կրթադաստիարակչական համալիր խնդիրների լուծման նպատակներ»:

Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրը այնպիսի ընթերցողի ձևավորումը է, որը կարդալու ընթացքում ձեռք բերած տեղեկույթը մշակում է ,իմաստավորում է և օգտագործում: Ճանաչողական տեսություններ համաձայն՝մարդու մտավոր կարողության մակարդակը որոշվում է նաև իր ձեռք բերած տեղեկույթը իմաստավորելու ունակությամբ:

Շահեկան է նաև կարդալ հանձնարարելուց առաջ բնագրի վերաբերյալ որոշակի առաջադրանքներ տալը,ընտրովի ընթերցանության տարաբնույթ ձևերի կիրառությունը,հատվածաբար կարդալն ու այդ հատվածի հիմնական բովանդակության վերլուծությունը և այլն:Հասկանալով կարդալու ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել համակարգված աշխատանք՝ օգտագործելով բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի ընձեռած հնարավորությունները:

Եզրակացություն

Այսպիսով, մեր ուսումնասիրությունները,որոնց մասնակցեցին տարրական դասարաններում աշակերտները, ցույց տվեցին, որ կարդալու կարողության ձևավորման մակարդակը ճիշտ չէ արագության չափանիշներով որոշելը:Հակառակ դեպքում անտեսվում են կարդալու մյուս որակական հատկանիշների ձևավորման հնարավորությունները:

Ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպման յուրահատկությունն այն է,որ ուսուցիչն ինքը պետք է պլանավորի ու կառուցի դասաժամը:Այն որևէ կերպ չպետք է զիջի մայրենիի մյուս դասերին,որոնց ընթացքում, բացի կարդալուց և պատմելուց,իրականացվում են բազմաբնույթ այլ աշխատանքներ:Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը պետք է կազմակերպվեն այնպես, որ լինեն հետաքրքիր, ուսուցանող և սպասված լինեն աշակերտների կողմից,որ բարձրացնի նրանց ճաշակն ու կուլտուրան:

Գրականության ցանկ

Ելենա Դանիլովա- Հոգ.գիտ.թեկնածու, մանկավարժ-հոգեբան

Ջ.Գյուլամիրյան -«Մայրենիի ուսուցման մեթոդիկա»

Սլաստինիկ Վ. -մանկավարժ

Ա. Տեր-Գրիգորան-Հայոց լեզվի մեթոդիկայ

<<Նախաշավիղ>>գիտամեթոդական հանդես

Ա.Բահատրյանն- Մանկավարժական թերթ

Կարինե Թորոսյան ԿԱԻ նախադպրոցական և տարրական կրթության բաժնի վարիչ